


Մոտակա դրամական ռեֆորմի հետեւանքներից ազգաբնակչության շահերը պաշտպանելու նպատակով, «ՄԵՐԿՈՒՐԻ» ձեռնարկությունը երկու շաբաթով հայտարարում է 1961-1992 թթ. թողարկման թղթադրամների ընդունում 6 ամիս ժամկետով, որի դիմաց առաջարկում է 105%:

Փաստորեն Ձեզ հնարավորություն է ընձեռվում ոչ միայն կրկնապատկել Ձեր կարողությունը, այլեւ, փոխել Ձեր տրամադրության տակ գտնվող հին թողարկման թղթադրամները նորերով:

ENTERPRISE Mercury

Երեւան, Սայաթ Նովա 19,
«Անի» հյուրանոց, 6-րդ հարկ,
636 սենյակ հեռ. 59-46-36

[illegible]

## Վարչապետի նշանակումը կսրի իրավիճակը

Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Թենգիզ Կիտովանու կարծիքով, Օթար Պացացիայի նշանակումը վարչապետի պաշտոնում կարող է մեծացնել լարվածությունը Արեւմտյան Վրաստանում, ակտիվացնել ապակայունացումը եւ առաջ բերել քաղաքացիական պատերազմ. Արեւմտյան Վրաստանի Զուգդիդիի, Փոթիի եւ Գալիի շրջանների միջեւ կան մեծ հակասություններ: Զուգդիդիի ներկայացուցիչ Պացացիայի նշանակումը կառաջացնի մեծ խնդիրներ: ԻՖ

## Ռազմական տեխնիկայի ցուցահանդես

Սեպտեմբերի 8-ից 13-ը Նիժնի Նովգորոդում կանցկացվի «Սպառազինություն, ռազմական տեխնիկա, կոնվերսիա» նշանաբանով ցուցահանդես: Նրա կազմակերպիչները նշեցին, որ այս տարի Ռուսաստանը մտադիր է էապես մեծացնել սպառազինության արտահանումը, շեշտը դնելով բարձր որակի վրա: Ըստ որում, կշրջանցվեն ՄԱԿ-ի բոլոր արգելքները եւ կվաճառվեն այնպիսի զինատեսակներ, որոնց հակազդեցության համակարգերը գոյություն ունեն: Վաճառվողների թվում են C-300 ՊՄՈՒ-ի հրթիռային համակարգը, որը գերազանցում է իր ամերիկյան «Patriot» համարժեքին, աշխարհում լավագույն «Տոչկա» հրթիռը, նորագույն հակաօդային համակարգեր: ԻՖ

## Կրավչուկ-Վարդինոյանիս հանդիպում

Լեոնիդ Կրավչուկն ուրբաթ օրն ընդունեց Յանիս Վարդինոյանիսին, որը Հունաստանում խոշորագույն ֆիրմաներից մեկի՝ «Յանիս Վարդինոյանիսի ֆինանսաարդյունաբերական խմբի» նախագահն է: Այդ խումբը մեկուկես տարի Ուկրաինայում զբաղվում է նավթի արտադրության ու վերամշակման, հեռուկանալերի եւ պահեստարանների կառուցման հարցերով: Դրա ավարտից հետո Յանիս Վարդինոյանիսը Ուկրաինայի ռադիոյով հայտնեց, որ ինքը գոհ է զրույցի արդյունքից: ԻՖ

## Ինքներս կվաճառենք

Նախոդկայում գտնվող Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Օլեգ Սոսկովեցը տեղական ղեկավարության հետ երեկ կայացած խորհրդակցության ժամանակ հայտարարեց, որ անհրաժեշտ է խթանել ցանկացած արտահանում, մանավանդ՝ հումքի: Նա նշեց նաեւ, որ Ռուսաստանը ի վիճակի է ինքն առանց միջնորդների կազմակերպել առեւտուրը: Փոխվարչապետը նաեւ հայտնեց Նախոդկան, որպես ազատ տնտեսական գոտի, տուրքերից ազատելու մասին իր ցանկությունը: ԻՖ

## Կրակել են Ֆեդոտովի պաշտոնյանին

Օգոստոսի 22-ի առավոտյան Մոսկվայում անհայտ անձինք երեք անգամ կրակել են մամուլի եւ լրատվության նախարարության շենքի վրա: Ինչպես ԻՖ-ին հաղորդել է հերթապահ էլեկտրիկ Վիկտոր Պեստախը, կրակել են ուրբաթ պաշտոնաթող եղած նախարար Ֆեդոտովի աշխատասենյակի և ընդունարանի պատուհաններին: Պեստախը հաղորդել է, որ Ֆեդոտովը դուրս է եկել շենքից շաբաթ կեսգիշերին: Կիրակի նա նույնպես եղել է նախարարությունում մինչեւ կեսօր: ԻՖ

Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՅԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորման եւ նկարազարդումների հեղինակ ՊԱՎԵԼ ՂԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերականի» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2   Գրանցման թիվ 65   Պատվեր 69149   Տպաքանակ 38.000   Պատվեր 1579   Ստորագրված է տպագրության 23. 8. 1993

digitised by A.R.A.R.@